ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2017թ. թիվ 57-Ա

Ա.ՍՈԼՈՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34 կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 2017 թվականի փետրվարի 3-ի գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Արարատ Սոլոյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2017 թվականի փետրվարի 6-ից:

2. Ա.Սոլոյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. փետրվարի 3
ք.Վանաձոր